

ՀԱՍՏԻ

ԱՐՇԱԿԱՆՍԻՆ փոքրեկամ և անկողնու կապիտալիստի և ուղղակի հետադարձի հասցիներ

ADMINISTRATION du Journal Arménien "ARCHALOUYCE"

SHAHEN HADJETIAN

B. P. 1221 LE CAIRE

TELEPHONE NO 22-92

Գրասենյակը գտնվում է Կայսերական փողոցի հարյուրամյակի թիվ 12-ում

Ձեռագիրները եւ չեն տրվում

ԳԼԵՆԻՆԻ ԶՈՐԵՔԱՐԹԻ ՕՐԵՐԸ



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՆԿԱՍ ՀԱՅԱԹԵՐԹ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Տարեկան 20 Կգ. 1912

Տարեկան 20 Կգ. 1912

Ազգային բարձրագույն դպրոցի ղեկավարը

ԹԻՒ 22

Արտոնահան երկրամասի հաստատվածները, Համար 28 Հրամանագրով

ԹԻՒ 22

ԶԵՆՈՅՑ

Կր խնդրով մեր յարգելի բաժնետիրներին և թղթակիցներին, որպեսզի լաւ ուշադրութիւն դարձնեն Արշակունյի նոր հասցիներ վրայ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԷՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վ. Փարիզեան և Պատմաբան Հայոց Գրականութեան Գին 1 Բարձր 50 Կոպէկ

Տարիներ առաջ և հովիտ և Երաթաթեթի էջերում և Մեր Գրանադատական գրականութիւնը և յոգաւում, խօսելով Լէօն և Ռուսաստանի Կրակաւորութիւնը, աշխատութեան մասին ևս փաստացի կերպով յայտնել եմ այն միտքը, որ մեր շուրջը իսկական քննադատական գրականութիւն ըստ իրեն նշանակութեամբ եղած էլ ներկայացնում է միակողմանի, միատեսակ գրականութիւնը չպարտաւորաբար մալիցիայի մէջ էլ և Բիբլիոթեկայի քաղաքացիական կոմիտեի քննադատական գրականութիւնը չի զլացաւ հաւանական կարծիքներով արձագանք տալ իմ արդարացի նկատումներին և Մեր Գրական և Արշակունյում և իմ Զարկի, Երաթաթեթի և Կիսմաքու Մատենադարանում, քանիցս առիթ եմ ունեցել մատնանշելու և այն տիրուր հանգամանքի վրայ, թէ՛ ինչպիսի ահաւելի չափերով մեզանում ըստ է գրել նեղ կուսակցական-թափաքական ոգին և աւերմունքներ է գործում, մինչ այն աստիճան սանձարձակորէն և թեւատարած, որ զգուշութեամբ արշակունյի նուրբամբ կուրացած ապիկար գործիչները չտարբեր, հերթը հասցըրել են մինչև անգամ և զարոյցական գասագրքերին:

Կուսակցութիւն հասարակական, քաղաքական և այլ ասպարէզներում, հասկանալի է, բայց պոռոտախօսական հովերով գլուխ բարձրացնող և քոչուած ստութիւններով ճշմարտութեան գահին բազմանել յատկապէս կուսակցութիւն տեսնել զասագրքի մէջ, այդ և՛ անհասկանալի է և՛ անարգանքի սիւսնին գամելու արժանի երևոյթ:

Մի այդպիսի անթաղանթի վարմունքի բնաւորութիւն կրող երևոյթի գլուխ գործոցն է կապուած Վ. Փարիզեանի Պատմութիւն Հայոց Գրականութեան գիրքը. մի գիրք, որ հրատարակուել է կար-

ծես միայն նրա համար, որ նրա ձեռնարկող հեղինակը իր ունեցած հին ու նոր հայիւնները այս ու այն հայ գրողներին հետ մաքրել, վերջացնել, գովելով և առաջ քաշելով բարեկամ-թափաքականներին իսկ հակառակորդներին վատարանելով և կամ գրող չի համարելով: Արդարութեան սկզբունքներին անմիջական պահանջումով՝ այդ և նման արգահատելի երևոյթներին դէմ ես չեմ կարող հանդուրժել և լուրջութեամբ անցնել, այլ անշուշտ բարոյական պարտականութիւն պիտի զգամ ըստ իմ թիկով, հոգիս ամբողջ գործութեամբ բողոքելու և Փարիզեաններին կարգի հրաւիրելու, որ նրանք գրական գործունեութեան մէջ ունենան փոքր ի շատ է լրջութիւն, բարեխղճութիւն և աշխատեն ձեռք քաշել իրենց անուան և պատուին արտաբերող խնդրիցին ստորերկրայ գործունեութիւնը ցոյց տալու պաշտօնից:

Նախ լսենք Հայ գրող Պ. Լ. Գրանիչեանին, տեսնենք ինչ է գրում և Մշակում:

Չարմանալի մակերևութային է և արհամարհական Վ. Փարիզեանի վերաբերմունքը դէպի 60ական ու 90ական թուականները շարժումը. գրական-գաղափարական հոսանքները նրա նկարագրութեամբ կորցնում են իրենց բոլոր հմայքն ու արժէքը:

Գրական դէմքերի քարակտարիտիկաները կատարուած են անընդհատ, տարակալի, անհամապատասխան կերպով: Ոչ գրողի գրական դէմքն է ճիշդ որոշուած, ոչ տեղը, ոչ խաղաղած գերը: Զէ պահպանուած նոյն իսկ ժամանակագրական կարգը:

Բոլորովին մակերևութային է հեղինակի վերաբերմունքը առհասարակ և ընդհանրապէս դէպի գրական երևոյթները: Ընթերցողը, կարգալով այդ գիրքը ծայրէ ի ծայր, այնու ամենայնիւ չէ կարող իմանալ Վ. Փարիզեանի կարծիքը գրականութեան և նրա այս ու այն շրջանի գաղափարական և գեղարուեստական էութեան մասին: Իսկապէս ինչ բան է հայ գրականութիւնը, որոնք են նրա ընդողծելու և ընդհանրութիւնները, տեսակները, ինչպէս են զարգացել մեզանում, ուրիշ երևելու և իրար քննադատական արձաններին վրայ են զարգացել և ինչ ազդեցութիւն են թողել:

Հրատարակութեան էութիւնը և գերը չեն գիտցուած և բնականաբար չեն ստացել իրենց արժանավայել տեղը. գծագրուած են վայր ի վերոյ ու խոստովանութրուած: Թարգմանական գրա-

կանութիւնը ըստ երևոյթին գրականութիւն չէ համարում Փարիզեանը: Անստեմ խօսում է բոմանտիկի, իրապաշտական գրականութեան ու հոգեբանական վէպերի մասին:

Այո՛, խօսում է... Բայց միթէ այդ երեք ճիւղաւորութիւնները իր վերջնում է մեր գեղարուեստական գրականութիւնը:

«Ապա ինչ բան են գաղափարական գրական նոր հոսանքները՝ փիլիսոփայական, հասարակագիտական, սիմբոլական, ժողովրդական, միթէ մուտք չեն գործում մեզանում և արժանի չեն յիշատակութեան»:

Իմացի գրանից՝ կրտսիկան, քրնիադատութիւնը իր առանձնայատուկ էջը չէ պէտք է ունենար մեր գրականութեան պատմութեան մէջ:

Այժմ գառնանք գրական այն դէմքերին, որոնք արժանի է համարել Վ. Փարիզեանը և Պատմութիւն Հայոց գրականութեան մէջ յատկապէս նշելու:

Մինչպէս երևում է, գրական տրագիկան և էտիկա աստուած բանն էլ ամենակէին չէ ընդունում Փարիզեանը:

Մինչդեռ այդ տրագիկանն ու էտիկան պահանջում են չը յիշատակել պատմական ձեռնարկի մէջ այն տեսակ գրողներին, որոնց մասին հասարակական կարծիքը իր տրամադրութիւնը, իր որոշումը դեռ ևս չէ ցոյց տուել ոչնչով, չէ արտայայտել ո՛չ իր համակրանքը և ո՛չ իր հակակրանքը. այդ մէկ և երկրորդ՝ որ քննադատութիւնը չէ արտասանել իր գատավճիռը:

Վսկ եթէ ոտնակոխ պէտք է անել այդ բոլորը և յանձնարարել յիշատակելի է, և յուսատու է, և ուշադրութեան արժանի է և որսկուսներով, աւելի լաւ չէ՞ր լինի ինչէն նաև մնացեալ փոկական գեղարուեստական յուսատու գրողներին: Օրինակ, երբ ինչպէս է բանաստեղծ Մոճուհեանը, Արամ Զարգը, պէտք է ինչէլ Գործիչանին, Քրիստ Թագեղոսեանին, որի ծեր պիկոնը, Սիրոյս հետք մի ժամանակ լինում էր խուլ անկուններում սնգամ, պէտք է ինչէլ Ա. Կրասիլնիկեանին, Պալեանին, Ա. Միխիլեանին, Սերնգին, Զանեանին:

Իր Բարասանեան (Շարունակելի)

ՄԱՆՕՊՈՒԹԻՒՆ - «Արշակունյ» Տպարանին գործելու որոշելու ժամերուն մէջ որ ի վերեւ ծանուցուած է, այցելութեամբ չէ որ գործը գոյ գտնելով մեկնին, Բարիսեանի և քոչուած կ'ըսէ Աւետարանը:

ՆԱՄԱԿ ԳՈՂԻՐԷՆ

Պատ Վարչութիւն «Արշակունյ» Լրագրի Ի Գանիքէ

Այսօր ձեռքս անցաւ Պոլիս տպագրուած Թէոփիլի 1912 վեցերորդ շրջանի Տարեգրքը:

Թէոփիլի այդ խնամեալ գործը իր թրուութիւններն ունի, սակայն ունի նաև առաւելութիւններ ալ. որոնց չեմ գիտեր թէ՛ դուք միջոց ունեցա՞ք ծանօթանալու:

Թէոփիլի Տարեգրքին ուղղութիւնը ի նկատի ունենալով, յայտնի է թէ՛ գէշ իրադրութեամբ պիտի ցոյց տար այնպիսի անձերու հանդէպ, որոնք զգուշաւ կարելի է ձեռնադրել ձեռքը. եւ զարմանալին հոն է որ Պ. Թէոփիլի՛ ատուցած է ամենէն նշանաւորը. Հանգուցեալ Տէր Ղեւոնդ Եպիսկոպոս: Շեքմանեանի լուսնակալը - հսկողակ իր սկզբունքներուն - բարեհաճ է գետնից իր Տարեգրքին մէջ, համարուած ու վրան գոց եւ կցկտուր կենսագրական մը ընելով անոր մասին:

Հանգուցեալ Տէր Ղեւոնդ Եպիսկոպոս Շեքմանեան Մեծ Աքարականին՝ Թէոփիլին նուիրում այդ հոտուածը շատ մը զորանոր պատճառներով բոլոր եղիպասանոցս համար կարի՛ նետարքունական ըլլալը իրտու լաւ գիտեմ... այդ պատճառաւ՝ իրաւունք ունենալ կր կարծեմ ինչպիսի որ հանք անկիւն մը չնորհել անոր և Արշակունյի մտակար թիւրքին միտք մէջ, եւ ընդունիլ բարեհաճ իր կանխապայտ շնորհակալութիւնը: Ինչպիսի անարկայ կենսագրական ընդգործակալութիւնը ներկցեալ է:

Միտք Ձերդ ՌԱՍԱՄԵՍ

ՏԵՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՍԿՈՒՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՒՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ ԹԵՄԻՒԿԻ ՏԱՐԵՑՈՑԸ 1912

Մնած է Հաս-Բէյ 1846 թուին Աշխարհական անուր նշան, (Հայրը՝ Մաղար վարժապետ. միկետարցի՛ կրթիչ, շրջանակի մէջ անուն հանած է իր ուսուցիչ և երաժիշտ Պէզեան ամիրայի ձեռքին տակ) նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին Ներսէսեանի պարտը, յետոյ՝ յարունակած իր ուսմունքը Բերայի Միխիլեանի վարժարանը: 1864ին ուսուցչութեան պաշտօնով կը հրաւիրուի Էտիքն հօրը հետ, ապա Թիւրքի՛ ուր կը փետայանայ տեղւոյն երեւելիներէն Կոնստանտին Կոնստանտինով և այլ ամուսնութեամբ կուենայ 3 զաւակ: 1870ին Պոլիս դարձին Ուսումնապետ կը կարգուր ի Տեմալի Ներսէսեան-Ներսէսեան վարժարանին. յետոյ կը մեկնի Աթ. Գարահիտար՝ ուր կը հիմնէ գիշերօթիկ վարժարան մը իր երկու եղբայրներուն հետ: 1874ին, կնոջ մահով, վարժապետ կը ձեռ-

նագրուի Արմաշ՝ Ալըքեան խորէն և պիտուպոսէն - 1876ին Պիլէճիկի առաջնորդ ընտրուելով, շուրս տարի ետք եպիսկոպոս կը ձեռնադրուի Իրբի քննիչ Աղայի նուառական խնդիրներու, այցելած է Եզդան, Կիւրին, Սիւ Միլիտի կամպոնիսի Պէրաթի ծանօթ խնդրոյն առթիւ:

1886 թուականին կը կոչուի Խարբերգի առաջնորդական պաշտօնին, և 1889 թ. Ալըքեան պատրիարքի հրահանգով կը զրկուի Կարին, քաղաքին մէջ տեղի ունեցած Ա. Ղեւոնդ մը առթիւ, ուր եկեղեցիին բակին մէջ 50 հայեր սպանուած էին: Կը յաջողի հաշտութիւն վերահաստատել հանգարտեցուներով զրգուած միտքերը հայ և թուրք տարբերու և Վեց տարի ձեռնհասութիւններուն, անոնց զարմանք խնդրէն կը վարէ Կարնոյ ընդարձակ Վիճակին առաջնորդական գործերը (Սիւսականի և Կլասոթիլի ուղղած իր հեռագիրը որ կարգալին թերթիւնն ազդեց և որուն մէջ կը պարզեր Սասունի կոտորածին յետոյ հոն տեղի ունեցած հարստահարութիւններն, անոնց զարմանք խնդրէն իր կարեւոր են նաև այս տուութիւ հրատարակած իր յոգաւածները Թամի մէջ: 1895ին, երբ Անատոլի Ընդէ, Գինի և Շարի փայտ կը հասնի Կարին, Ղեւոնդ Եպիսկոպոսի գլխավորութեամբ զարգացած շրջանով, կ'ամբաստանուի իր խոստովարար և գաղտնի յարաբերութիւն մշակող եւրոպ. շրջանակներու, մասնաւորապէս Թամիլի և Տէյիլի Թեյիկուսի թղթակցի Տօրթ Է. Է. Սիւրբանուրի հետ, որոնց հանդէպ ամեն զոհողութիւն կ'ընէր՝ հայոց դատը պաշտպանելու համար: Անկէ ետքն է որ տեղի կուենայ քաղաքին ազդեցալի վարդը (1905 Հոկտ. 15) և Կարնոյ իշխանութիւնը հրաւիրելով քաղաքին ազդեցիկ հայերը, բացատրութիւն կը պահանջէ և եղած ճնշումին տակ՝ ստորագրութիւն կուտուի անոնց մէջ Սեւանի պարտը գրուած է հայերը, Հայ ժողովուկաններ կ'ստիպեն իրեն հրատարակելով Պոլիս վերադառնալ, որպէսզի զրգուած իր խաղաղ և կը մնայ իր պաշտօնին գլուխը: Զարգէն 2 ամիս վերջ, 1905 Մեկ. 18ին, Համիտի իրատեսով շրջանով կողմերուն ամենէն աստուկ ձեռնուան եղանակին, Շիլմանեան 100

(1) Ան թէ ինչ պատճառ գոտութիւն ունէր, որ կ'որոշուի նախկին Առաջնորդ՝ ապա Պատրիարք (Օրմանեան և Օրմանեաններ) որեւի՛թ թշնամի գառնային հանգուցեալ իրաւար և Մեծ Աքարականին, որովհետեւ կը փոփոքէին որ կարծիք միտք արտաւ լեւորու մէջ լրագր:

կան դասը՝ ի գլուխ ունենալով Գեր-
Առաջնորդը, ամբողջութեամբ ներկայ
էր: Տասնեակ մը հետեւակ եւ զոյց մը
հեծեալ ոստիկաններ, պակնեւրու տակ
ծածկուած քառաձի մեծակալորը եւ
խուռնեւրած յուզարկւորները թափորը
կառավարողէին զէպի Պէնէ-Սուրէնի
Ս. Աստուածածին եկեղեցին, ուր տե-
ղի ունեցաւ եկեղեցական արտորոշու-
թեւններն եւ Հանգուցելոյն մարմինը
փոխադրուեցաւ Ս Մինասի (Մարտինոս)
ազգային գեղեցիկ ստուերը:

Արշալոյստի նմարգրութեւնը իր
արտադին ցաւակցութեւնները կը յայտ-
նէ՝ Բրուտեան, Հաճէթեան, Հաղար-
եան, Տէօյէթեան, Տէր-Առաքելեան
եւ Հապէչեան ընտանիքներուն եւ բո-
ւոր ազգականաց ու բարեկամաց, իրենց
այս դասն կորստեանն համար:

ՆՈՒՆԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ողբացեալ Տիկին Փարեզ Մ. Բը-
րուտեանի ցաւակցութեւնները կը յայտ-
նէ՝ հետեւեալ նուիրատուութեւնները եղած
են տեղւոյս Բարեգործական Հաստատու-
թեանց.

Մեծ. Տիարք Նշան Հաճէթեան 195
Արեթ Հաճէթեան 195, Համեա. Տիկ-
նայք Պէտրէն Ն. Հաճէթեան 97 ու կէս,
Ազապի Ա. Հաճէթեան 97 ու կէս, քա-
ղաքիս Աղքատախնամ Ընկերութեան:

Մեծ. Տիարք Նշան եւ Արեթ Հա-
ճէթեան եղբարք 195 դր. ողջ կը նը-
ուիրեն Արարիկի Կրթասիրաց Միու-
թեան:

Պարոնայք Մինաս Ն. Հաճէթեան
97 ու կէս, Եանէն եւ Օրբորդ Իսկուհի Ա.
Հաճէթեան 97 ու կէս Արարիկի Կրթա-
սիրացին:

Մեծ. Տիար Արուստ Հաղարեան
(Աւէքսանգրիս) փոխան ծաղկեպատկի
50 դր. նուիրած է Արարիկի Կրթա-
սիրաց Միութեան:

Մեծ. Տիար Հրանդ Քէչիկեան Փո-
խան ծաղկեպատկի 50 դր. ողջ նուի-
րած է Արարիկի Կրթասիրաց Ընկե-
րութեան:

ՇՆՈՐՀԱՊԱԼԻՒՐ

Հաճէթեան, Բրուտեան Հաղար-
եան. Տէօյէթեան. Տէր-Առաքելեան
եւ Հապէչեան ընտանիքները իրենց խո-
րին շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր
ազգականաց, Բարեգործական Հաստա-
տութեւններու եւ ազնիւ բարեկամաց,
որոնք անձամբ, հեռագրաւ եւ նամա-
կաւ փութացած էին իրենց ցաւակցու-
թեանը յայտնել. ողբացեալ Տիկին Փա-
րեզ Մ. ԲՐՈՒՏԵԱՆԻ գտնու կորստեանն
առթիւ:

Սրգերն աւարտելէ ետեւ, կրօնա-
ւորները երկու կարգ զէ՛մ առ զէ՛մ կե-
ցան. վանահայրը մէջէնին անցաւ.
երկու կրօնաւոր՝ որոնք սարկաւազի
պայտօն կը կատարէին, վանահայրին
ետեւէն կը թափային նորընտանի հետ. որ
սպանիացի ասպետներու ճոխ ու գեղե-
ցիկ կերպարանք մտած էր:

Այս չորսը գաղին թարանին առջեւ
ձուռնի վրայ նստան խորհելէ բարձրու-
վրայ, որ յստակապէս իրենց համար
պատրաստած էին:

Սպանիացի ազնուական մը կնքա-
հայրութեւն կրէր Յովէթի:

Գերապայծառ Արարեղ ալ իրեն
համար պատրաստուած աթոռը բազմած
էր:

Աւետարանէն ետեւ սովորական
քարոզը արուեցաւ, ճամարտակ եւ նըր-
բախորտը բանախօսութեւն մը վա-
նական կենաց սրբութեանն ու երկու-
կութեանը վրայ. անյարբի եւ մութ
խօսքեր՝ խորին եւ անհասկանալի խըս-
տակրօնութեամբ օպակորեալ, որ ոչ
սրտի եւ ոչ երեւակայութեան հետ կը
խօսէին. այլ միշտ Հոռոմի միակ նպա-
տակին վրայ կը դառնային, այն է՝

Իշխելու համար խաւարեցնել:

Ունկնդիրները շատ գոհ եղան քա-

ՏԻՂԱԿԱՆ

Ն. Բ. ԽՈՒՆԻՐ

Ն. Բ. Խոսիլը երկուշաբթի օ-
րը Գուպէի Պալատան մէջ նախա-
ճաշ մը տուած է ի պատիւ թաւ-
քիոյ նախկին մեծ եպարքոս Տէ-
րեա փայալի, Անոր Եգիպտոսէ
մեկնմանը առթիւ:

Նորին Բարձրութիւնը կէս օ-
րէն յետոյ իր Տիւն-Շառ-Էլ-Ռամլի
կալուածները գնացած է, ուր կը
կարծուի թէ քանի մը օր մնայ:

ՌՄԱԿՈՒՄՈՒՄԷՆ ՅԵՏՈՅ

Թէպէտեւ հեռագրիները հեր-
քեցին թէ Պէյրութի բարեկամու-
մէն քաղաքին ճակատաց ո՛ր է վր-
նաս պատճառուած չէ, սակայն Ե-
գիպտոսի թուրք հայրենասէրները
Ն. Վ. Բրէնս Մուհամմէտ Ալի
փաշայի նախագահութեանը յանձ-
նախուժ մը կազմելով հանգանա-
կութեան ձեռնարկած են Պէյրութի
բարեկամութեան ընկերութեան
ընտանեացը նիւթապէս
օգնելու համար:

Այս նպատակաւ Բրէնս Մահ-
մուտ փաշա Համտի 50 ոսկի տրա-
մադրած է Յանձնախումբին:

ՄԵՆԵ ՄԱՐԻՍ

Թուրքիոյ նախկին մեծ եպար-
քոս Տէրիտ փաշա, որ ժամանակէ
մը ի վեր քաղաք կը գտնուէր,
երէկ մեկնեցաւ քաղաքէս եւրոպա
ուղևորելու համար:

Մեծ եպարքոսներու այս ու-
ղևորութիւնը առանց մասնաւոր նը-
պատակի ըլլալու չէ:

ԼՈՐՏ ՔԻՉԵԼՐ

Գահիրէի երեւելիները, ի գը-
լուխ ունենալով Ն. Բ. Խոսիլին եղ-
բայրը բրէնս Մուհամմէտ Ալի փա-
շա, միսթարական աշխուժութիւն
տուած են Արգիլոյ կիսաջոր ներ-
կայացուցիչ Լորտ Քիչիլէրին, Անոր
Եղբորը մահուան առթիւ:

Ն. Բարձրութիւն Լորտը, ի
րեն եղած միսթարական աշխուժ-
ութեանց եւ հեռագրիներուն կը պա-
տասխանէ Մուհամմէտ Ալի փաշա-
ն, իր շնորհակալութիւնը կը յայտնէ
անոնց, որոնք փութացած էին
զինքն միսթարել իր Եղբորը մահ-
ուան առթիւ:

ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏԸ

Նախարարապետ Ն. Բ. Մու-
համմէտ փաշա Սալտ անցնել օր
Աղէքսանդրիա մեկնեցաւ, ներկայ
գտնուելու համար Վարմիր Մահ-
կի ի նպատակ Ալիսամարա թատրո-

րողէն. այսու ամենայնիւ քարոզչին
ճարտարաստութիւնը չի դաւաւ արգելով
ներկայ գտնուող գեղանի տիկնայքը՝ որ
աչքերին շարունակ դեռահասակ նորըն-
ծային վրայ չուղղէին, եւ անոր գեղե-
ցիկ զէմըն զմայլմամբ չ'ընտէին:

Սակայն Յովէթ խիստ տգոյն էր.
բայց իր սեւ աչքն անտուրք տեսիլ մը
ունէր, եւ զէմքին վրայ ալ մերթ ընդ
մերթ ուրախութեան ազտ փայլակներ
կը նշմարուէին:

Պատարագէն յետոյ, վանահայրը
նորընտանիքը ջով գնաց:

«Ինչ քանի համար այդպէս պա-
ճուճեալ Աստուծոյ տունն եկեր ես,
հարցոց:

— Հորոցս փրկութիւն գտնելու
համար. պատասխանեց Յովէթ:

— Այնպիսի փառքերուն ու պեր-
ճութեանց մէջ կը կարծես գտնել:

— Կը հրաժարիմ այնպիսի փառ-
քերէն ու չուքերէն:

— Միակ այդ բաւական չէ. պէտք
է նաեւ մարմինդ ու կամքդ ալ հրա-
ժարիս:

— Այո՛, սրբութիւն պիտի ուխտեմ,
եւ խոնարհ ու հուռ պիտի ըլլամ անոր՝
որ զիս փրկութեան ճամբան առաջնոր-
դել ուզէ:

— Փայէ ուրեմն՝ ո՞րսա վանահայ-
րը:

Ինն մէջ տրուելիք ներկայացման
ՓՈՒՐԻԿԻ ԿԱՏԱԿ ՄԸ

Քաղաքիս վաճառականներէն
մին յունական թերթի մը մէջ յայ-
տարարութիւն մը կուտայ թէ՛ իր
որդեգրած մէկ երիտասարդին հա-
մար նշանած մը կը փնտռէ, եւ
աւելորդ է ըսել՝ մէկ երկու օրէն
80-100 թեկնածուներ կը ներկա-
յանան:

Վաճառականը նկատելով որ
իր որդեգրիին համար այդ թիւը
չափազանց է, գարձեալ մամուլի
միջոցաւ իր շնորհակալութիւնը կը յայտ-
նէ փութկոտ թեկնածուներուն:

Հին ատենները փոքրիկ աղ-
չիկներն ու մանուկները հարսնիք
կը խաղային, հիմայ տարեցները
սկսած են զէջ չէ:

ՍԻՐԱՅԻՆ

Շարաթ օրը Օրէրայի հրա-
պարակը քանի մը կաթիլ արիւն
թափաւ է կ'ըսեն թերթերը:

Արքիսք Մասրուտագէջ մը, իր
մտացուած ըլլալու աստիճան հին
բարեկամներուն մէկէն սուր դանակի
քանի մը հարուած ընդունած է, ի
վարձատրութիւն իր բարեօք ծա-
ռայութեանցը... ի հոռոմն:

Գնունութիւնները հաստատած են
որ, գտնակահարը իր հարստու-
թիւնը փճացուցած է վիրուտեալին
հաճելի ըլլալու համար, եւ որովհէ-
տեւ այդ միջոցը յաւազած է, իր
հոմանուհին նոր անկուճէ մը փոք-
կելու համար նոր միջոց մը գտնել
կարծած է գտնակին գիմելով: Գէջ
միջոց չէ՛ եթէ այս անպատ յաղողի:

ԱՍՈՒԼԻՍՆԵՐ

Կառավարութեան կողմէ ար-
գելի (séquestre) ներքեւ առնը-
ուած պատանտագոյքերու մը հըս-
կոյին, (gardien-արտերէնը յա-
ժիր) որ բուրսովին կոչը է, գա-
տական վճարն զորմադիր պաշ-
տօնեայն կը հարկէ:

— Քեզի յանձնուած գոյքերը
աճողքն են...:

Գոյքերուն տէրը՝ որ ապահով
է թէ՛ արդէն ան ած ձեռքերու
մէջ հալած են անոնք, եւ մը-
այաճներն ալ յաճիրին կորուսեա-
նը զուճուած... Գիտել կուտայ
պաշտօնեային՝ ըսելով:

— Պարոն գործադիր պաշտօն-
եայ՝ ձեր այս յաճիրը բոլորովին
կոյր մէկն է՛ եւ իր թիթը անգամ՝

Սրկու կրօնաւոր բոնեցին նորըն-
ծան ու սեղանին եփուը յատկապէս
պատրաստուած տեղ մը տարին:

Մութ տեղ մ'էր գերեզմանական
կանեղով մը լուսաւորուած, որ կա-
մարէն վար կախուած էր: Մէջնեղը
գետնին վրայ սեւ գորգ մը փռուած էր,
եւ վրան գազաղ մը դրուած սեւ ծած-
կովով. որուն շուրջը շորս ճերմակ
մտմ կը վառէր:

Գազաղին կապարիչին վրայ ալ
մեռելայի զուխ մը կար երկու իսաճաճե-
սովներու վրայ դրուած. եւ գետնիը
ցցուած երկու նիզակներու վրայ ալ՝
արծաթեայ մեծ խաչ մը եւ մեռելոց
առջեւէն արուած զրօշակ մը բարձրա-
ցած էր:

Նկուզին վերի ծայրը՝ կապարեայ
խաչելութեան մը քով՝ սեւ ծածկովով
սեղան մը կար, որուն վրայ նորըն-
ծային հաղեղիք վանական նոր զգեստ-
ները դրուած էին:

Այս տեղը փրկութեան նկուզ կը
կոչուէր, ուր նորընծան մինակ կը
թողուի:

Հոն Յովէթ իր աշխարհական ըզ-
գեստները հանեց, զովնկեկանց զգեստ
հագաւ, ճիւղակ պատուճառ մը ու սե-
փորուրք մը, տխուր զգեստ մը՝ որ
մահուան նշանազգեստ կը թուի: Յե-

տնանելու անկարող, ինչպէս կը-
լայ ար անոր ըստմաներուն կը հա-
ւատար թէ ճիշդ կրնան ըլլալ:

— Հոգ չէ՛, կ'ըսէ պաշտօնեայն
մեկի պէտք եղածը անոր մէկ թա-
րիֆանց մեծնարն է, վճարուող
գատարը համարելու համար: Իսկ
գալով կուրսութեան՝ ատկա սովոր-
ական է երկուտուի համար, եւ
արդէն՝ երկուտուանկերուն շա-
տերը իրենց թիթն ծայր տնանելու
անկարող են. հետեւաբար յուղե-
լու բան մը չկայ... ու զափրին
գառնալով՝ կ'ըսէ:

Հա՛ր խեղճեմ...:

— Սա ծանօթ խեղճիք ինչպէս
վերջապահի՛ր, հարցոց բարեկամ
մը մարդու մը՝ որ տարիներէ ի
վեր չարագործներու ձեռքին մէջ
տառապանքի կեանքը կապէր...:

— Գործ է խեղճի չունիմ կը
պատասխանէ: Թատերական ճառակի
մը կազմակարգ կը պատասխանէ
և չորս վարագործները յաղողու-
թեամբ անցան, հինգերորդը եւ
վերջին վարագործը է որ պիտի
բացուի, ու կը յուսամ թէ՛ անոր
արտադրած արդիւնքով պիտի կա-
րենամ ներկայացուել շինարարի վը-
րայ գնել...:

ԱՍՏՆՈՒՄՆԵՐ ԵՒ ՄՏԱՆՈՒՄՆԵՐ

— Կին մը երբ սիրոյ վրայ ծիծա-
ղիլ ձեւացնէ, կը նմանի այն աղոց որ
գիշերները մուկէն վախեցով կեղեկն...:

— Պոտիկ նկատուեմերը՝ գեղեցի-
նըն են մեծ ձեռնարկներու:

— Իրաւունք ունեցողն է զօրաւոր.
եւ այն որ իրաւունքով զօրաւոր է,
բոնտ թիւնը կրնայ արհամարհել:

— Որ որ մեծ հոգի մը մարմին
կուտայ իր միտքին Գողգոթա մը յա-
նով կուգայ:

— Կինը փոփոխմիտ է. անոր
վստահող խենթ է, և կին ժաղուխ
պսակ է ան իւրում...:

— Վտանգը կանհետի, երբ հա-
մարձակիք անոր նայի...:

— Իմաստութիւն է նախահնամու-
թեան պարզեւած բարիքները վայելելը
իսկ առաքինութիւն է զանոնք ուրիշ
ներու վայելել տայր:

— Եթէ ոսկիին անարատութիւնը
ճանչնալ կուզես, փորձաբարին զիմէ
եղին ուժը՝ թեցողքը գայն. մարդուն
նկարագրի՝ խօսեցողքը զինքը:

— Մեծ խեղճի մ'է գիտնալը թէ՛
կանայք վերջին գառաստանին՝ իրենց
սեպի մէջ մնալով յայտնութեան պիտի
առնեն, վասնզի կը վախցուի որ՝ ա-
նոնք մարդիկը նորէն փորձութեան կը
մտանեն, նոյն իսկ Աստուծոյ առջեւ:

այս փետրագորգ փեղոյրը հանեց զիսէն
որուն վրայ բացի գերծեղ մազերէն
ուրիշ զիստի չ'պիտի գրուէր յաւիտ
եան եւ փոխանակ ոսկեճառու զօտիին
ալ՝ որ է՛ սուրը կախուած էր, չուան մը
փաթիլից մէջը՝ ի նչան ազգատութեան
վերջապէս իր ճոխ կոչիկներն հանեց
ու հողաթափի հագաւ:

Այս ամենը կէս ժամու չափ տեւեց:
Նորընծային ձեռքի վրայէն բոնուա
ծի պէս կը զոզար. սիրան անհասար
եւ գահավէժ կերպով կը բարսիներ, եւ
պաղ յորտինք մը կը վազէր սպիտակա-
փայլ երեսներէն: Մուկի վրայ եկաւ
նշանելութեան առջեւ եւ գտնու ու լա-
ւազին ձայնով ազօղի սխաւ:

Կսկածազին հեծութիւնները գուրս կը
բղիւխին կուրծքէն, անիմանալի խօս-
քեր կը մտնէր, եւ չրթուէն անգա-
զար անուն մը կը յեղեղէին՝ զոր մի-
այնինք կը նշար հակնալ:

Սոյն միջոցին երգեհոնն իր ահար-
կու ներդաշնանութեամբ եւ կրօնաւոր-
ներն անգաճայն եւ որոտագին երգերով
մատուր կը զղրեցնէին: Նորընծայ
պատանիին շիղբը՝ որ արդէն երկար
ձոնապահուեալմամբ գրգռեալ էին, ա-
ւելի զրգռեցան: Այն մարդկային երգե-
րն ու երգեհոնին ձայնը՝ որ ուրիշ աշ-
խարհէ եկած հակայաշունչ ձայնի մը կը
նմանի, տարօրինակ ազգեցութիւն մը

ՀԵՌՈՒՊՈՒՐ

Հոռմ 11 Մարտ. — Բաւի մը
բորք զօրագուններու միացած 1500
արարներ, անոյս 10ին Այնը-Չա-
րայի քերդեր պաշարած են: Բայց
դիւրարեալք եւ մղուած են:

Կ. Պոլիս 11 Մարտ. — Լիքա-
նակի Կառավարչէն ստացուած հե-
ռագրի մը համաձայն, հոն գրք-
նուած իսլայցիները մեկնած են.
սակցի կրտսի թէ՛ հարիւրակ մը
իսլայցիներ բողած են Բաւալիո-
սը:

Ս. Փէրերայուրի 11 Մարտ. —
Կր ծանուցուի թէ՛ Պէլիւսի Ռու-
սական դեսպանը Պ. Տը Հեռնիկ
Կ. Պոլսոյ դեսպան անուանուած է
Պ. Չարիֆիկն սեղ, որ ճեւղար-
սական անուանուած է. Այս փո-
փոխութիւնը Օ. Բէրերայուրիի դի-
ւանագիտական շրջանակներուն մէջ
մեծ սպաւորտիւն յայտնուած է:

Լաճար 12 Մարտ. — Թուրքիա
սկսած է Տարսանէի մէջ պայտու-
ցիկ սկաններ զիտելը, առանց
նաւորիչի այլու նաւերը չը պի-
տի կրնան անկե անցնել:

Կ. Պոլիս 12 Մարտ. — Պ. Չա-
րիֆիկի կանխորդ զանազան մեկ-
նորակներու պատճառ եղած է. Կը
կարծուի թէ՛ Տարսանէի հարցը որ
անցեալ Դեկտեմբերին մէջ սեղի
ունեցաւ. Ռուս Կառավարութեան
դիտմաներուն հետ յարաբերութիւն
ունի: Պաշտօնական շրջանակներու
մէջ մեծ մտահոգութիւն կը սրէ թէ՛
Չարիֆիկի փոփոխութիւնը Ռուս-
Պարս յարաբերութեան վրայ
պիտի ազդէ:

Հոռմ 13 Մարտ. — Ամսոյս 11ին
կասաղի կոխ մը սեղի ունեցաւ
Քոպրիսի մէջ. Թուրքերը պաշա-
րեցին նոր շին

ԳՐԱԴԱՐԱՆ ԱՐՇԱԼՈՅՄԻ

ԾԱՆՈՒԻ ԳԻՐՔԵՐ

Վերջապահ Չայնե (Խրիստոս Չայնե)	Գրք.	10
Յանգի Հայրենաց (ՀԱՅՈՐՈՒՄ-ՏԻՐ Կեանք Եպիսկոպոս Երջանեան)	"	10
Սասուն եւ Զեյթուն (Սիւնն Յեղեկեան)	"	10
Յիշատակարան Լուսար Փաշայի (Եղիշի Թորոսեան)	"	20
Chants Opopulaires Arméniens (Երուզ. իսկանդրոսեան 1. Եղիազարեան)	"	24
Ներշնչումն Վերս Մ. Տաւադեան	"	5
Գող Մաս Ս. Բ. Շարդեան	"	5
Մարդկային կենցաղ Կարագոյրի (Քաջա Կայկունի)	"	5
Տառապանքի Աշխարհեան (Վ. Թրոսեան)	"	4
Սուրբան Հալիս ինչպիս անաւ (ԱՐԱՄ Ա. Գալեան)	"	4
Կարուածոց Դիւան եւ Բաղաբ. Ժողով (Մ. Անդրանիկեան)	"	2
Ազատութեան Շարիդ (Ազատցոյի)	"	4
Առնեան Տրանսախյ բառարան (Մ. Յովնանեանեան)	"	12
Թրքերի (Ա. Գալեան)	"	2
Հիւշի	"	2
Մարիթ	"	2
Ազգային Մանուկագրութեան (Հայերեան Թուրքերեան)	"	12

ՀՈՐԻԶՈՆ

ՅՈՒՆԻՍ Ե ՔԱՇԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔՈՒՆ 1912

ՀՈՐԻԶՈՆ

Հրատարակուելու է մօտ աշխատակցութեամբ կարող գրիչներու

Բաժնեգրին՝ տարեկան Պարսկաստան 10 ռուբլի. Թուրքիա

120 դուրուշ. Ամերիկա 6 դուրար. Եւրոպա 30 Յրանդ.

Rédaction du Journal « Horizon »

Tiflis Caucase-(Russie)

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Շարա Բուպրիի սկիզբը

Ապտիսի Գարագոյի մօտ

Անոնք որ ճաշակաւոր զօքիւն մ. ունենալու համար զանազան տեղեր դի. մած ու զօգոն մնացած են, թող ան գամ մը մեր վաճառատունը այցելեն. պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր. աւելորդ եթէ իրենց յանձնարարութիւնը նը գտնացուցիչ չ'գտնեն, կանխավճար ամբողջովին ետ պիտի ստանան:

Այս պայմանը՝ ճաշակաւոր հազ. ունելու փափաքողներուն համար, նը պատասաւոր առիթ մը պիտի ըլլայ:

Ապտիսի պարագաները նկատու. դուրեւան շին առնուելի, եւ անոնք որ ինծի կը գրեն, զիւրաւ կրնան ըմբռ. նել ապտիսի տարբերութիւնները. թէ գործի մաքրութեան եւ թէ գի. ներու մասին:

185 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Նպաստ Ազգաստանում Ընկերութեան

ԹԻՐԱԺ

ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑՈՒՑՈՒՄԻ Ժ. ՆԱՅՏԻՆԿԵՐ

Պատարի փողոց. Խաչնէսարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Նիւ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԺԻՒՆԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԸՐՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմ յինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է:

400 Կ աւելի վաշայակ եւ մեքայներով վարձատրուած, երաշխատեալ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ Վ.ՐՁ.ՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանկիւնին մէջ ստացած է. ՀԱՅՈՒՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ՀԱՅՈՒՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅՈՒՅԹԻՉ Ն. Բ. ՆՅԵՂԱՅԱՆ ՑԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԸՐ յաւանդելիս



Ձրի դասեր և նորոգու. թիւները, ՍԻՆԿԸՐ մեքենա. յից համար, յաճախորդա. տուններուն մէջ:

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու. Գ. նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՅԼԵՕՈՒՄՔ ԻՒՆԻՎԵՐՍԷԼ



Մեծ վաճառատուն արուեստական ծաղիկ. ներու. ծաղիկիդրովներու եւ փունջե. ռու:

Մուսի Շարա էլ Միւզիկին Լաշինաց Եկեղեցոյն վտղոյը

ՏԻՆԻՆ ԼՈՒՍԻ Պ. ՉՈՒՔՕՅ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ՛ իր ծաղիկներու վաճառատունները փոխադրելով Շարա. էլ-Միւզիկին (Մուսիկ) Լաշինաց Եկեղեցոյն փողոցը. եւ անմբցելի աման գիներով կը վաճառէ արուեստական ծա. ղիկներ. ամենաչքող կողովներ հարսանեկան զեղաչէն ծաղ. կեփուշեր, կանանց գլխարկներու յատուկ փնջակներ եւ յուրաքանչեւ թեանց ծաղիկպսակներ:

Թարմ ու բնական ծաղիկները իր կը պատրաստուին սոյն վաճառատան մէջ, Մի' գիւմէք օտարազգիներու, որովհետեւ Fleuriste-Universelle վաճառատունը միակն է որ այդ ամեն մեծ ու պղտիկ վաճառորդներուն կը հայթայթէ արուես. տական ամեն տեսակի եւ գոյնի ծաղիկները:

Ասիկայ ամենատաղ իրողութիւն մը ըլլալով, զիւրին է հաշուել որ այս վերջինները բուն գինէն աւելի յաճով մըն է որ պիտի վաճառեն իրենց գիւմէքներուն, մինչդեռ ուղղակի Fleuriste Universelle վաճառատունը գիւմէքով տարակոյս չկայ թէ՛ անոնց շահածն ալ ձեր քսակը պիտի մնայ:

Վ Ա Ր Ձ Ո Ւ

Վ Ա Ր Ձ Ո Ւ

ԿԱՐՁՈՒ

Վ Ա Ր Ձ Ո Ւ

Վ Ա Ր Ձ Ո Ւ

ԱՂԱՏԱՄԱՐՏ

ՕՐԱԹԵՐ

Բաժնեգրին, տարեկան Պոլիս 75 ՊՐ. գաւառները 100, ամերիկա. 6 տուար, ուրիշ երկիրներ 30 Քր.

Rédaction du Journal Arménien AZATAMART Péra hamal bachi Constantinople

ԱՐԵՒԵԼԲ

ՕՐԱԹԵՐ

Բաժնեգրին, Պոլիս 100 եւ գա. ւառները տարեկան մէկ ոսկի. Ամերիկա. 6 տուար, արտասահման 35 Քր.

Հասցէ Rédaction du Journal Arménien AREVELK Galata Constantinople

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Դրական, Բաղախական, հասարա. կական եւ Առեւտրա-արդիւնաբերա. կան անկուսակցական անկախ ո. րացիր

Մուրհանգակ կը հրատարակ. ուի ամէն օր

Խմբագիր Աստ. Երիցեան

Սոյն Թերթին կանոնաւոր հը. րատարակութիւնը ապահովուած է Թիֆլիզի աւախակարգ վաճառա. կաններէն Պ. Գէորգ Մոսիսեան Ձիւնգարեան:

Բաժնեգրին տարեկան 10 ռուբլի

Հասցէ Rédaction du journal Arménien « SOURHANDAK »

Russie Tiflis-Caucase

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

ԱՄՍՈՒԹԵՐ

Բաժնեգրին 10 Քր. 4 ռուբլի. տուար, 50 ՊՐ.

Հասցէ Rédaction de la Revue PAZMAVEB

St. Lazar Venis (Italie)

ՀԱՆԳԻՒՄ

ԱՄՍՈՒԹԵՐ

ԻՋ Պ. ՏԱՐԻ

1912

Բաժնեգրին է կանխիկ Տարեկան 15 Քր. = 6 Ռուբլի

Խրատանիստ թիւր 1,50 Քր. 70 կ. Դիւնի Rédaction de la Revue HANDES AMSORYA

(Autriche) VIENNE

Շ Ա Ն Ք

Կիսամետայ Հանգէս Գրական եւ Դեղարուեստական Բաժանորդագրութիւն՝ Ատասահման 10 Յրանց

Հասցէ՝ Mr. Le Rédacteur en Chef

Meroogan Barsamian Imprimerie Chanth (Galata) Constantinople

Տ Պ Ա Ր Ա Ն « Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս »

Գիտելու, Թերթերու, Հանդէսներու, Պրոչիւրներու, Նամակագրութեան, Անյոթներու, Վաճառականական սեռերու, Այցեխարտերու, Մանուկներու, եւ Հայերեան, Անգլիերեան Տրանսլեթեան, Իտալերեան, Յունարեան, Արաբերեան լեզուներով սպարակական յանձնարարութիւններու համար պիտի է դիմել ԱՐՇԱԼՈՅ Տպարանը՝ յանձնաւոր եւ ճաշակաւոր սպարարիւն ունենալու համար. Զինչոններու սպարարիւնը ամենամեծ յանձնով կը կատարուի եւ մեծատու աւելի շնորհ յանձնարարութիւն ալ կը կողմնուի, ըլլա՛յ քաջտարական ըլլա՛յ վաճառականական. Եղած յանձնարարութեանց զուարթն կենդ կանխիկ չի վճարուածները նկատուելու չեն առնուիր: